
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՏԱՎՈՐԸ

(Գ. Շ. Գյոդակյանի ծննդյան 75-ամյակի առիթով)



Էական տարբերություն կա հայ երաժշտագիտության և երաժշտական հայագիտության միջև: Ակնհայտ է, որ մեկը նկատի ունի երաժշտական մշակույթն՝ ընդհանրապես, իսկ մյուսը հայկական մշակույթի ուսումնասիրություն է ենթադրում, այն էլ հիմնարար մակարդակի վրա: Սակայն մեր բոլոր խոշոր երաժիշտ-հայագետներն այս գիտությունը զարգացրել են համաշխարհային մշակույթի օրինաչափությունների հաշվարկով, յուրաքանչյուրն իր գիտական հետաքրքրությունների համեմատ:

Հայ երաժշտության պատմատեսական մտքի զարգացման և հայ նոր երաժշտագիտական դպրոցի ձևավորման գործում կարևոր դեր են խաղացել խորհրդային շրջանի մի շարք նշանավոր երաժշտագետներ, որոնց շարքում առանձնանում են Ա. Շահվերդյանը, Բ. Քուշնարյանն ու Գ. Տիգրանովը: Նրանց թողած գիտական ծանրակշիռ վաստակն արժևորվեց և դարձավ երաժշտական հայագիտության կարևորագույն օղակ, ամուր ու փաստարկված հիմք՝ իրենց իսկ կրթած անվանի գիտնականների համար: Դրանց թվում են Ռ. Աթայանը, Ն. Թահմիզյանը, Ս. Բրուտյանը և անցյալ դարի հիսունականներին գիտական գործունեություն սկսած Գևորգ Գյոդակյանը:

Հայ արդի երաժշտագիտության ամենաբարձր հեղինակություններից է Գ. Գյոդակյանը: Նախ՝ իր կրթությամբ (Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոց, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտուրա), իր ուսուցիչների՝ Գ. Տիգրանովի, Գ. Սարաջյանի, Բորիս Յարուստովսկու ղեկավարությամբ հղկված բարձր պրոֆեսիոնալ որակներով, ապա բեղմնավոր գործունեությամբ (ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կրտսեր գիտաշխատողից մինչև փոխտնօրեն, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, բազմաթիվ գիտնականների ուսուցիչ) և, իհարկե, իր գիտական վաստակով Գ. Գյոդակյանը ծանրակշիռ գիտնական է մեր երաժշտագիտության մեջ:

Լինելով մեզանում համաշխարհային երաժշտական արվեստի լավագույն մասնագետներից մեկը՝ նա տարիներ շարունակ, իբրև մանկավարժ, եվրոպական երաժշտական արվեստի նրբին տեսական հմտություններ է պատվաստել բազմաթիվ երաժշտագետների: Դրա հետ մեկտեղ Գ. Գյոդակյան գիտնականը այսօր մեզ ներկայանում է երաժիշտ-հայագետի ակնածանք պարտադրող գիտական ժառանգությամբ:

Երևույթները, նույնիսկ արդեն դիտարկված, առնվազն նոր գիտական հատույթով քննելու խնդիր է լուծել Գ. Գյոդակյանն իր գիտական գործունեությամբ, իսկ առավելագույնս՝ սեփական տեսությունն է հիմնավորել հայ երաժշտատեսական մտքի պատմության մեջ: Գ. Գյոդակյանի յուրովի վերարծարծման շնորհիվ նոր որակում և մեկնաբանում ստացավ հայ ազգային դասական երաժշտության կարևորագույն հանգրվաններից մեկը՝ «Ալմաստ» օպերան և Ալ. Սպենդիարյանի ժառանգությունն առհասարակ (*„Опера „Алмаст“*, *„Александр Спендиаров“*, ժողովածու, Ե., 1973, կազմող՝ Գ. Գյոդակյան):

Արդեն շուրջ երկու հարյուր տարի է, ինչ հայ երաժշտական միջնադարագիտության առջև ծառայած մեծ հիմնահարցը մնում է խազերի վերծանումը: Հայ և օտար անվանի գիտնականների ջանքերը ցայսօր այս բնագավառում վերջնական նպատակակետին չեն հասել: Գ. Գյոդակյանն այն սակավաթիվ գիտնականներից է, որոնց ուսումնասիրությունները նոր հայեցակետի և մեթոդաբանական մոտեցումների շնորհիվ զգալիորեն առաջ մղեցին արդի խազագիտությունը (*„Возможные пути расшифровки армянской хазовой нотописи“*, *„Традиции и современность. Вопросы армянской музыки“*, ժողովածու, գիրք 2, Ե., 1996, կազմող՝ Գ. Գյոդակյան):

Գ. Գյոդակյանի վաստակի առավելագույն նվաճումներից է «մետալադի տեսությունը»: Եթե ապագայում հնարավոր դառնա շարադրելու հայ երաժշտական մտքի զարգացման ամբողջ ընթացքը, ապա այն մեզ կներկայանա Դավիթ Անհաղթի երաժշտատեսական դատողություններով, հայ միջնադարյան մյուս երաժիշտ-փիլիսոփաների հարուստ ժառանգությամբ, Հ. Լիմոնջյանի ստեղծած նոտագրությամբ, հայ երաժշտության ինքնությունը հաստատող Կոմիտասի տեսական հայտնագործումներով և XX դ. հայ գիտնականների մշակած տեսական համակարգերով, որոնց շարքը եզրափակում է Գ. Գյոդակյանի հիշյալ տեսությունը: Այն, հիմնավորված լինելով հայ ժողովրդական երաժշտական արվեստի մի քանի հազար նմուշների հետազոտությամբ, հարաբերելի է XX դ. երաժշտատեսական մտքի ամենաբարձր մակարդակին: Այդ ընդհանրացված տեսությունը վերահաստատում է երաժշտության փիլիսոփայական բնույթը և առնչվում է իմացաբանության բարդ ոլորտներին ու մի շարք այլ հիմնարար գիտությունների (*„Черты ладовой системы армянской народной музыки“*, *„Традиции и современность. Вопросы армянской музыки“*, գիրք 1, Ե., 1986, կազմող՝ Գ. Գյոդակյան):

Գ. Գյոդակյանի գիտական կարևորագույն սկզբունքներից մեկը երևույթներն ու անհատականությունները համամշակութային ենթատեքստում, համաշխարհային երաժշտական արվեստի հետնախորքի վրա, դրանց օրինաչափությունների գուգահեռականությամբ և պատմական ընթացքի տրամաբանությամբ քննելն է: Այդպիսի բնույթ ունեն Ռ. Մելիքյանին (1960), Ալ. Սպենդիարյանին, Ա. Խաչատրյանին և հասկապես Կոմիտասին նվիրված ուսումնասիրությունները:

Այսօր կարող է թվալ, թե Կոմիտասը, որպես հայ դասական երաժշտության և հայ ազգային-դասական կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, սկզբից ևեթ ընկալվել է իր պատմական նշանակությամբ ու ժառանգության գեղարվեստական լրիվ արժեքով: Սակայն կոմիտասագիտությունն էլ իր զարգացման ընթացքն է

ունեցել, որն սկզբունքորեն ուղղորդած և կազմակերպած խոշոր հայագետներից մեկը Գ. Գյոդակյանն է:

Կոմիտասագիտության բնագավառում գիտնականի վաստակը կարելի է բաժանել երկու ոլորտի: Առաջինը ուսումնասիրությունն է՝ նվիրված ազգային երաժշտական հանճարի կյանքին ու ստեղծագործությանը, երկրորդը Կոմիտասի ժառանգության ակադեմիական հրատարակությունն է: Գ. Գյոդակյանը, ըստ էության առաջինը, **Կոմիտաս** երևույթը դուրս բերեց զուտ ազգային երաժշտական արվեստի ուղեծրից և քննեց XX դարի համաշխարհային մշակույթի համատեքստում: Խնդիրն այն չէր, թե Կոմիտասն իր կենսագրությամբ եվրոպական մշակույթի հետ ինչ շփումներ է ունեցել. այդ մասին շատ էր գրվել: Ժամանակի համաշխարհային երաժշտական մշակույթի զարգացման ընթացքի և Կոմիտասի աշխարհայեցողական, գեղագիտական ու ստեղծագործական սկզբունքների գուգորդումով Գ. Գյոդակյանը մատնանշեց, թե XX դարի խոշոր երաժիշտների շարքում որտեղ և ում կողքին է Կոմիտասի տեղը (Դեբյուսի, Բարտոկ, Կոդալ):

Կոմիտասյան ժառանգության վերհանումը մեր երաժշտագիտության հարյուրամյա չմարված պարտքն է, քանզի նրան ազգային առաջին դասական ենք համարել՝ առայժմ ճանաչելով իր ժառանգության փոքրիկ մասը: Կոմիտասի ժառանգությունը հրատարակելը XX դարի երկու խոշոր հայ երաժշտագետի բոլորանվեր ծառայությունն է հարազատ ժողովրդին և հայրենի գիտությանը: 1990-ական թվականների սկզբին վաստակաշատ Ռ. Աթայանն այդպես էլ չկարողացավ ավարտել մեր ազգային երաժշտական հանճարի ժառանգության հրատարակումը: Նրա մահից հետո Կոմիտասը, կարծեք, կրկին տարագրվեց, այս անգամ ԱՄՆ՝ իր ժառանգությամբ: Նրան վերադարձրեց ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ղեկավարությունը, և Գ. Գյոդակյանը հանձն առավ, երբեմն թերավարտ, երբեմն էլ անպատրաստ մնացած հատորների ակադեմիական պատշաճ հրատարակությունը:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն Գ. Գյոդակյանն այսօր էլ կրթում է մասնագետ երաժիշտներ, վարում ակտիվ գիտական գործունեություն: Վաստակաշատ երաժշտագետն աշխատում է Կոմիտասի ժառանգության հերթական հատորի վրա: Հրատարակել է 7-11-րդ հատորները, շուտով լույս կտեսնի 12-րդը: Դրա կողքին՝ նոր գիտական հետազոտություններ, իր ղեկավարությամբ գիտական ատենախոսություն պաշտպանող երիտասարդ գիտնականներ, գիտական կյանքի կազմակերպման տարատեսակ հոգսեր:

Գ. Գյոդակյանի աշխատանքը բոլորանվեր ծառայություն է Կոմիտասի, և վաստակը՝ երախտիք հայրենական երաժշտագիտության, հայ մշակույթի առջև: Երախտաշատ գիտնականին մաղթում ենք երկար տարիների կյանք և գիտական արգասաբեր գործունեություն, ի փառս երաժշտական հայագիտության հետագա զարգացման:

ՆԱՎՈՅԱՆ Մ. Ռ.

արվեստագիտության թեկնածու